Տ. ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ՊԱՐՍԱՄՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԵՐ ՏԵՐ ԵՒ ՓՐԿԻՉ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(13 հունվարի, 2013 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Սիրելի քոյրեր եւ եղբայրներ,

Անունները կարեւոր են մեր կյանքում: Մեզանից յուրաքանչյուրն ունի մի անուն՝ իր ծննդյան օրից տրված: Ոմանք գիտեն իրենց անվան նշանակությունը, ոմանք՝ ոչ:

Աշխարհում գոյություն ունեն անձնանունների ամենատարբեր բառարաններ, որոնց մեջ տրվում են անունների բացատրությունը, դրանց նշանակությունը եւ այն բոլոր պատմական անձերը եւ իրողությունները, որ կապված են այդ անվան հետ: Ես ձեզ խորհուրդ կտամ, որպեսզի հետաքրքրվեք եւ հասկանաք, թե ձեր անունը ինչ է նշանակում, որովհետեւ անունը, սիրելիներ՛, շատ կարեւոր է մարդու համար եւ երբեմն ցույց է տալիս մարդու առաքելությունն այս կյանքում:

Մենք մեծ խնամքով ենք ընտրում անուններ մեր երեխաների համար՝ այդ անվան ետեւ տեսնելով այն մեծ պատմությունը, պատմական հիշողությունը, որ կապված է մեր կյանքի հետ: Օրինակ՝ մենք մեր փոքրիկ երեխաներին կոչում ենք մեր ծնողների անունով, մեր հոր կամ մոր անունով՝ փորձելով նրանց անձի մեջ ապրեցնել մեր ծնողներին: Այսու, ցանկությունն ունենք, որ նրանք դառնան ընտանեկան ավանդության անընդհատելի շարունակությունը՝ ժառանգները:

Երբ խոսում ենք մարդկանց հետ եւ չենք հիշում նրանց անունը, անհարմար վիճակում ենք հայտնվում: Իրապես, մեծագույն վիրավորանք է այն անձի հանդեպ, ում հետ խոսում ես, սակայն ում անունը մոռացել ես:

Պատմությունը լի է հանրաճանաչ, նշանավոր մարդկանց անուններով, որոնք իրենց ժամանակի մեջ թվում էր, թե աշխարհի տիրակալներն էին եւ կտրուկ հեղաշրջում էին աշխարհի ընթացքը, սակայն նույն պատմությունը վկայում է եւ մենք էլ այսօր կարող ենք վկայել, որ այդ մարդիկ նման էին պարզապես մարող, ընկնող ասպղերի: Նրանք մի որոշ ժամանակի համար ծագում են հորիզոնի վրա, փայլատակում, լուսավորում, սակայն քիչ հետո մարում են, անհետանում, ինչպես նաեւ մահանում է նրանց հիշատակը:

Ժամանակը մեծագույն կործանիչն է մարդու անվան եւ մարդկային փառքի: Ժամանակի բովի մեջ մարդու անունը չորանում, թառամում է, լավագույն դեպքում՝ գերեզմանվում գրադարակներում դրված փոշոտ գրքերի էջերի մեջ: Որոշ մարդկանց անուններ հիշվում են պատմության գրքերի մեջ, որոնցից շատերն այսօր գտնվում են անտարբերության փոշու շղարշի տակ:

Սիրելիներ՛, ամեն անգամ, երբ գնում եմ գերեզմանատուն, գերեզմանոց, մահվան

այդ լուռ քաղաքը, անդրադառնում եմ, թե որքան անժամանակավոր, որքան անցողիկ է այս կյանքը: Այնտեղ հանգչում են ամենատարբեր մարդիկ՝ հզոր եւ տկար, հարուստ եւ աղքատ, իշխան եւ շինական, որոնք սակայն ունեն մեկ ընդհանուր բան՝ նրանց բոլորի անունները գրված են քարերի վրա՝ մեկինը մի քիչ գեղեցիկ, մյուսինը մի քիչ համեստ, բայց բոլորն էլ՝ քարերի վրա: Աշխարհի բոլոր անունները մի օր գրվելու են ժամանակի քարի վրա, եւ սա պատմության անվիճելի վկայությունն է: Ո՛չ ոք հավիտենական չէ, ո՛չ մեկի անունը անմահ չէ: Այն անունները, որոնք այսօր ծափահարվում են, այն անունները, որոնք այսօր կոչվում են աստղեր, այդ անունները վաղը մոռացության պիտի մատնվեն եւ պիտի փոշիանան...

Ի տես մարդկային մեծագույն այս ողբերգությանց, մեր Երկնավոր Հայրը, մեր Տեր Աստված շուրջ երկու հազար տարի առաջ աշխարհին տվեց մի անուն, որին աշխարհը եւ մարդկությունը շատ են սպասել: Այդ անունն է Հիսուս Քրիստոս:

Անցյալ շաբաթ մենք տոնախմբեցինք մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծնունդը, իսկ այսօր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբում է Հիսուս Քրիստոսի Անվանակոչությունը: Դրա համար քարոզս սկսեցի մարդկային անունների կարեւորության, բայց եւ վաղանցիկության մասին, իսկ հիմա ցանկանում եմ անդրադառնալ Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Սուրբ անվան նշանակությանը:

Այս օրվա Ավետարանը տարվա ընթացքում Սուրբ խորանից ընթերցված ավետարանական հատվածներից ամենակարճն է, ընդամենը մեկ նախադասություն: Ղուկաս Ավետարանիչն ասում է. «Եւ երբ ութ օրերը լրացան, եւ նա թլփատուեց, նրա անունը Յիսուս դրուեց, ինչպէս հրեշտակի կողմից կոչուել էր, երբ դեռ չէր յղացուել մօր որովայնում» (Ղուկ. Բ. 21):

Մենք, իբրեւ զավակներ, հնարավորություն չունենք մեր անվան ընտրության մեջ. մեզ անվանակոչում են մեր ծնողները, սակայն իբրեւ ծնող՝ մենք ենք, որ անուն ենք ընտրում մեր զավակների համար:

Հիսուսի պարագային տարբեր էր, Հիսուսի անունը երկրային՝ իր ծնողների կողմից ընտրված չէր: Հիսուսի անունը երկնային էր, Աստծո հրեշտակի կողմից պատգամված «ինչպէս հրեշտակի կողմից կոչուել էր, երբ դեռ չէր յղացուել մօր որովայնում»:

«Հիսուս» անունը պատմում է, թե ով է Աստծո Որդին եւ նկարագրում է նրա առաքելությունն այս կյանքում: Հիսուս թարգմանաբար նշանակում է Փրկիչ կամ Տերը փրկում է, իսկ թե ինչի՞ց է փրկում մեզ Քրիստոս՝ բացատրում է նույն ավետարեր հրեշտակը. «Նա Յիսուս պիտի կոչուի, որովհետեւ նա պիտի փրկի իր ժողովրդին իր մեղքերից» (Մատթ. Ա. 21):

Մեր հավատքը մեզ ուսուցանում է, որ նախահայր Ադամի մեղսագործությունից սկսյալ, մարդկությունը գտնվում էր մեղքի իշխանության տակ եւ արժանացել էր մահվան դատապարտությանը, ինչպես որ Աստված նախապես զգուշացրել էր Ադամին. մեղքի պատիժը մահն է:

Հիսուսի անձի միջոցով, Նրա ծննդյան, չարչարանքների, խաչելության, մահվան եւ

հարության միջոցով մենք ազատվեցինք, փրկվեցինք մահվան դատապարտությունից: Մարդկությունը ի վիճակի չէր քավելու իր մեղքը:

Քրիստոսից առաջ եղան բազում մարդիկ, մի շարք անուններ՝ արդարներ, մարգարեներ, նահապետներ. ամեն մեկը ջանաց բուժել մարդկության վերքերը, սակայն ապարդյուն. մեղքը բազմել էր մարդու սրտի մեջ եւ չէր ուզում զիջել իր գահը:

Եւ Աստված ուղարկեց Իր Միածին Որդուն, որ խաչվեց մեր փոխարեն, մահացավ, մահվան դատավճիռն ընդունեց մեր փոխարեն եւ մեզ պարգեւեց փրկություն: Սա գոյաբանական իմաստով. այս աշխարհի մեջ մեր մեղանչական բնությունը վերագտնում է իր նախկին սրբությունը եւ փրկվում է միայն Հիսուս Քրիստոսի անձի միջոցով: Իսկ էսբանական առումով, սիրելինե՛ր, մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի փրկությունը մեզ պարգեւեց մի շարք նորություններ:

Հիսուս նախ վերականգնեց մեր անձնական հարաբերությունը մեր Երկնավոր Հոր հետ: Աստծուն սկսեցինք կոչել Հայր, իսկ Աստված մեզ կոչեց որդիներ: Հիսուս Քրիստոսի փրկությունը մեզ ընտանիք պարգեւեց: Մենք այլեւս առանձին մակույկներ չենք կյանքի ալեկոծ ծովում, այլ միասին մի համայնք ենք, մի Եկեղեցի, Աստծո ժողովուրդ:

Եւ վերջապես, Քրիստոսի փրկությունը պարգեւեց մեր կյանքին իմաստ. այլեւս ինքնանպատակ չենք ապրում, այլեւս ծրագրեր չենք կազմում մեր փառքի համար: Այլ, իբրեւ քրիստոնյաներ, ապրում ենք մեր Երկնավոր Հոր համար, մեր Երկնավոր Հոր հետ, եւ ամեն ինչ, ինչ որ անում ենք, անում ենք Նրա սիրուց դրդված եւ Նրա սիրո համար:

Այս պահին, սիրելինե՛ր, երբ խոսում ենք փրկության մասին, միտքս է գալիս Եսայիի մարգարեության մի չքնաղ հատված, որը մարգարեությունների մեջ իմ ամենասիրելի հատվածն է: Աստված խոսում է իր ժողովրդի հետ եւ ասում. «Մի՛ վախեցիր, որովհետեւ փրկեցի քեզ եւ կոչեցի քեզ քո անունով, թէ իմն ես: Եթէ ջրերի միջով անցնես՝ քեզ հետ կը լինեմ, եւ գետերը քեզ չեն խեղդի. եթէ կրակի միջով անցնես՝ չես այրուի, եւ նրա բոցը քեզ չի կիզի. քանզի ես եմ քո Տէր Աստուածը՝ Իսրայէլի սուրբը, որ պիտի փրկեմ քեզ» (Ես. ԽԳ. 1-3):

Ի՜նչ հոգեթով տողեր, ի՜նչ հուսադրող խոսքեր... Աստվա՜ծ է խոսում է իր ժողովրդի հետ, այսօր խոսում է մեզ հետ եւ քաջալերում. մի՛ վախեցեք ոչ մի բանից, Ես ձեզ հետ եմ ամեն օր, ամեն ժամ: Անցեք հուսահատության, հիվանդության գետերի միջով, սակայն չեք խեղդվի, որովհետեւ Ես ձեր կողքին եմ: Քայլեք ատելության, նեղության, թշնամանքի, բամբասանքի, չարախոսության կրակի միջով, սակայն չեք այրվի, որովհետեւ Ես եմ ձեր ապավենը եւ ձեզ պիտի փրկեմ:

Մարգարեության այս հատվածը, մեզ հուշում է նաեւ մի շատ կարեւոր հանգամանք. Աստված մեզ անունով է կանչում, Աստված գիտի մեզանից յուրաքանչյուրի անունը. «Ես անունով քեզ պիտի կանչեմ, որովհետեւ դու Իմն ես, Ինձ ես պատկանում»: Մենք մեր Հոր սիրելի որդիներն ենք եւ պատկանում ենք Նրան: Աստված է մեր Տերը եւ միայն Աստված է, որ փրկում է մեզ:

Իսկ ի՞նչ է պահանջվում մեզանից Աստծու այս ամենամեծ ողորմության, Աստծու այս անսահման սիրու դիմաց: Ի՞նչ է կամենում Աստված մեզնից:

Լսել եք հաճախ, երբ երեխան փանից դուրս է գալիս, գնում է դպրոց, ծնողներն ասում են. «Տղա՛ս, ծնողներիդ անունը բարձր կպահես», կամ երբ երիտասարդը արտասահման է գնում ուսանելու կամ աշխատելու, ասում են. «Հայի անունը բարձր կպահես»: Ահա թե ինչ է պահանջվում յուրաքանչյուրից. մեր Հոր անունը բարձր պահել, մեր ընտանիքի, մեր Եկեղեցու պատիվը բարձր պահել, ինչպես որ ասում ենք Տերունական աղոթքի մեջ. «Թող սուրբ լինի Քո անունը, Հա՛յր»:

Իսկ ինչպե՞ս է սրբաբանվում մեր Հոր անունը, ինչպես է բարձր պահվում մեր Հոր անունը, եթե ոչ մեր հավատքով, մեր առաքինասեր վարքով եւ բարի գործերով:

Ընկերներից մեկը պատմում է, որ իր փոքրիկ աղջնակը, երբ սովորում էր դպրոցում, տարրական դասարանում, ամեն անգամ տուն էր վերադառնում ինչ-որ մի փոքրիկ ջրաներկ կամ գծանկար ձեռքին: Այդ նկարի տակ իր անվան կողքին գրված էր անունը որեւէ մեկի, ում երեխան շատ էր սիրում՝ հոր կամ մոր անունը. «Սա քեզ համար եմ արել», - հպարտորեն ասում էր երեխան:

Սա ինձ հիշեցնում է Պողոս առաքյալի հետեւյալ խոսքը. «Եւ ինչ որ անէք խօսքով եւ գործով, բոլորն արէ՛ք Տէր Յիսուսի անունով. գոհութիւն մատուցեցէք նրանով Աստծուն եւ Հօրը» (Կող. Գ. 17):

Փոքրիկ աղջնակի նման, որ իր որեւէ ստեղծագործություն նվիրում է իր սիրելի անձանց, ծնողներին, կարեւոր է, որ մենք էլ մեր ստեղծագործությունները պարբերաբար նվիրենք մեր երկնավոր Հորը, մեր սիրելի Հորը: Ինչ որ ձեռնարկենք, սիրելինե՛ր, ձեռնարկենք Յիսուս Քրիստոսի անվան համար, Աստծո փառքի համար, Աստծո անունը բարձր պահենք, չէ որ Աստված, որպես սիրող Հայր, միշտ մեր կողքին է, եւ Աստված մեզ փրկում է ամեն տեսակ փորձանքներից, ամեն մի նեղությունից, ամենատարբեր հիվանդություններից, դժվարություններից ու հուսահատությունից:

Այս տարեսկզբին, երբ բացել ենք մեր կյանքի տարեգրքի առաջին էջերը, որոնք պիտի լցվեն բազում իրադարձություններով ողջ տարվա ընթացքում, եկեք առաջին իսկ ճերմակ էջի վրա մեծատառերով գրենք. «Նվիրում եմ իմ Երկնավոր Հորը, իմ Տեր Յիսուս Քրիստոսին», որին վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ հաւիտեանս հաւիտենից. ամէն: